№ 60 Մարտի 10 (22) 1880 Մարտի 10 (22) № 60

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիրում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Հայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի համալսարանի մասին։—Ներքին տեսութիւն։ Մ. Միհնսարեանց։ Հնագիտական ժողով։ Նամակ Հին-Նախիջևանից։ Նամակ Կղզիից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։—Մշակիս հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սա մի անհերքելի ճշմարտութիւն է, որ մեր կեանքը կամ մեր մահը բացարձակապէս կախում ունի մեր լուսաւորութիւնից կամ մեր տգիտութիւնից. ուսումն ու լուսաւորութիւնը մեզ համար մահու ու կենաց խնդիր է։ Այս ճշմարտութեան համոզված է գրեթէ ամեն մի հայ, այնպէս որ վստահութեամբ կարելի է պնդել թէ Ռուսաստանի մէջ գտնվող հայ ազգը ունի այս համոզմունքը։

Մեզ շրջապատող և մեզ դրացի եղող ազգերից ոմանք այս ճշմարտութիւնից շատ խորթ են, ու ոմանք նոր են արթնանում. և դորանք դեռ տեսակ տեսակ պատմական փորձառութիւններով, լրագրութեանց, ատենաբանութեանց, դպրոցաց և ուրիշ ձեռնարկութեանց միջոցներով պէտք է տանջանքներով աշխատեն չանք անել, որ այդ ճշմարտութիւնը իրանց մէջ տարածեն և ամեն մէկին ըմբռնել տան, թէ ուսումն ու լուսաւորութիւնը մահու և կենաց խնդիր է։

Մեր այդ համոզումը մեզ համար մի անգին առաջնութիւն, մի մեծ դրամագլուխ է, որ եթէ ուղիղ և նպատակայարմար կերպով առաջնորդվի և գործադրվի, անհամար բարի արդիւնքներ և հետևանք կունենայ, որովհետև միշտ գիտունը, ուսեալը, կրթեալը, լուսաւորեալը բարձր է լինելու տգէտից, անուսից, ռամիկից. այս խօսքը ճշմարիտ է թէ կուզ անհատի նկատմամբ, թէ կուզ ազգի նկատմամբ։

Թէպէտ և մի Կովկասեան համալսարանի համար շատ անգամ էր խօսք ու զրոյց եղել բայց վերացականութիւնից իջնող ու իրականութեան դաշտում առաջին քայլն առնողը եղաւ, ինչպէս որ բնականաբար էլ պէտք էր լինէր, Թիֆլիսը, որ, արդէն յայտնի է, 100,000 ր. և կառուցման տեղ է խոստանում, եթէ համալսարանը կը շինվի Թիֆլիսում։

Մեր նպատակը չէ առ այժմ յայտնել ու բացատրել այն մեծամեծ օգուտները որ Կովկասեան համալսարանը կարող է ունենալ ամբողջ տէրութեան համար. հարևանցի միայն յիշեմ այն հանգամանքը թէ արևելեան լեզուները՝ հայերէնը, վրացերէնը, թուրքերէնը, պարսկերէնը, արաբերէնը, քիւրդերէնը որքան դիւրին կարող են սովորվել բուն իրանց հողի վրա՝ իր մայրենի ընտանեաց մէջ, քան թէ Մոսկվա, Կազան, Պետերբուրգ, ուր որ մէկ տարուայ ընթացքում ուսանողի կամ ուսուցանողի ականջը հազիւ թէ մէկ բառ լսէ այն լեզուներով. այդ կենդանի լեզուները սովորվում են այն ճեմարաններում իբրև մեռած լեզուներ։ Ու բաց ի դմանէ հէնց հիմա են սկսում այս ազգերը իրանց անցեալովն ու ներկայովը, իրանց լեզուովն ու պատմութիւնովը, իրանց աւերակներովն ու հնութիւններովը Ուրոպային և հարկաւ նախ և առաջ Ռուսաստանին հետաքրքրելի դառնալ։ Այս և սորա պէս հարիւր ու մէկ ուրիշ խնդիրները թողած, ասում եմ, խորհենք թէ ինչ կերպ անել պէտք էր, որ Կովկասեան համալսարանը գոյութիւն ստանար։

Թէ մենք հայերս մի այդպիսի բարձրագոյն ուսումնարանից յանչափս պիտի օգուտ քաղէինք, դորան տարակոյս չը կայ։ Մեր որդիքը ստիպված չէին լինի հիւսիսային ցրտերումը իրանց փափուկ կեանքը փտանգի ենթարկել. նորա ստիպված չէին լինի ծնողական վայրից և ընտանիքից մոերմութեան կապերը կտրել, և այն և այն շատ երևանցի, ալէքսանդրապօլցի, շուշեցի, բագուցի և այն դիւրութիւն կունենար իր որդուն բարձրագոյն ուսում տալ։

Ուրեմն Կովկասի միւս քաղաքները պէտք էր իրանց օգտի, իրանց գաւառների և իրանց բոլոր սերունդի օգտի համար նշանաւոր գումարներով Թիֆլիսի քաղաքային վարչութեան օրինակին հետևէին։ Որովհետև մենք հայերս ամենից շատ ենք համոզված լուսաւորութեան անհրաժեշտութեանը, վասն որոյ և ամենից առաջ էլ մեր պարտաւորութիւնն է այս մասին արագ շարժել։ Թերևս մեր դրացի Թուրքերն էլ, որոնց ձեռքին մեծ հարստութիւն կայ, և որոնք մեզանից շատ են տանջվում թանձր տգիտութիւնից, խրախուսվեն և նորանք ևս սկսէին օգնել։

Ա. Ամիրխանեանց

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ Վ.ԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԻԶ

Ծերունի խաչօր տան մէջ ամենևին չը գիտէին թէ ինչ էր պատահել պ. Սալմանի հետ, միայն չատ անհանգիստ էին, որ նա գիշերը չը վերադարձաւ։ Մանաւանդ Վարդանը, Հայրապետը և Ապոն խիստ տխուր էին, որովհետև դղում էին, որ անպատճառ մի չար դէպք պէտք է պատահած լինի։ Առաւօտեան նրանք երեքը միասին անից դուրս գնացին, գուցէ մի բան կը լսէին նրա մասին։

Կէսօրին անակնկալ կերպով յայտնվեցաւ Թոմաս էֆէնդին։ Նրա այս տեսակ գալուստը, մենակ, առանց ծառայի, առանց զափթիաների խիստ օտարոտի թւեցաւ ծերունուն։ Նա միշտ ման էր գալիս իր առանձին սվիտայով։ Նա բռնեց ծերունու ձեռքից, մի կողմ տարաւ, որպէս թէ մի գաղտնի խօսելիք ունի նրա հետ։

—Գիտես, ասաց նա կիսածաղրական և կիսալուրջ եղանակով.—այն ազուզուկ փչողին կալանաւորեցին, տարան էլ գոգն Աբրահամը...»

Ծերունին հասկացաւ, թէ ում մասին էր խօսքը, սոսկաց, բոլոր մարմնով դողդողաց, և փոքր էր մնում. որ պիտի գլորվէր գետնի վրա։

—Սիրտդ պինդ պահիր, դողալու ժամանակ չէ, շարունակեց էֆէնդին,—դեռ ես շատ բան պէտք է լսես։

Նա պատմեց, թէ ինքը տեղեկացաւ, որ անցեալ գիշեր պ. Սալմանը գնացել էր մի գիւղ, այնտեղ մի տան մէջ հաւաքել էր իր շուրջը մի քանի երիտասարդ մշակներ, խօսում էր նրանց հետ «մարդկային անհատական իրաւունքների» մասին, խօսում էր մշակ մարդու «աշխատանքի» մասին, թէ խօսում էր «բռնակալութեան» դէմ, խօսում էր, ինչ եղանակով մարդիկ ձեռք են բերում «աւելի ազատ և աւելի բախտաւոր կեանքը»,—ով է իմանում. գանազան այս տեսակ «խենթութիւններ» վրա էր խօսում։ Ցանկարծ վրա են հասնում մի քանի ոստիկաններ և կալանաւորում են։ Կառավարութիւնը վաղուց որոնում էր այդ «խենթին», որովհետև նրա մի քանի ընկերները զանազան տեղերում կալանաւորված էին։ Այժմ այդ մուկիկն էլ ընկաւ որոգայթի մէջ։—Թոմաս էֆէնդին ամեն ինչ պատմեց, բայց չը յայտնեց, թէ ինքն էր մատնել պ. Սալմանին։

Նա կրկին դարձաւ դէպի ծերունին.

—Այժմ նոր առակ լուարուք, ասաց նա խիստ դառն ժպիտով, կարծես, աշխատում էր աւելի խոր խոցել ողորմելի ծերունու սիրտը։—Շուտով զափթիաները կը գան քո տան մէջ խուզարկութիւն անելու, ես, որպէս բարեկամ, եկայ քեզ նախապէս զգուշացնելու համար։

Նա մի առանձին կերպով չեշտեց «բարեկամ» բառը։ Այսուամենայնիւ, զափթիաների և խուզարկութեան անունը լսելով, ծերունին բոլորովին զարհուրեցաւ։

—Դեռ ես ազատվելու ժամանակ կայ, շարունակեց էֆէնդին աւելի սառն կերպով.—դու ինձ միայն այն ասա, նրանից խօս մի բան չի մնացել քո տան մէջ։

Որքան տարափելի վիներ հաղորդած լուրը, ծերունին դարձեալ փոքր ինչ հանգստացաւ, երբ նկատեց, որ էֆէնդու նման «բարեկամը» մի այսպիսի վտանգաւոր բոպէում օգնութեան ձեռք էր մեկնում իրան։

—Մի խուրջին է մնացել, պատասխանեց նա, երկչոտութեամբ իր շուրջը նայելով, մի գուցէ մի ուրիշը լսէ նրա ձայնը։

—Հիմայ եկ, այդ էլը ցեխիցը դուրս հան.... խօսեց էֆէնդին ինքն իրան։—Մի խուրջին է մնացել...դա քիչ բան չէ....

Նա դարձաւ դէպի ծերունին, իր սատանայական չիլ աչքերը լայն բացելով.

—Մի բոպէն անգամ թանդ է մեզ համար, ըստ ապիր, գնանք, թաղցնենք այդ խուրջինը, քանի որ դեռ չեն յայտնվել զափթիաները։

Ծերունին բոլորովին հաւատալով էֆէնդու անկեղծութեանը, տարաւ նրան օդան, և ցոյց տուեց պ. Սալմանի այնտեղ պահված ճանապարհորդական խուրջինը։

—Դռները կողպեցէք, պատուիրեց էֆէնդին, և ինքը բաց անելով խուրջինը, սկսեց քրքրել նրա մէջ եղած իրեղէնները։

Նրա մէջ կային զանազան յանձնարարական նամակներ այլ և այլ հասցէներով, կային զանազան մարդկանց անունով փոխանակներ, որոնցմով, պ. Սալմանը կարող էր հարկաւորած ժամանակ փող ստանալ, կային զանազան հրահանգներ, ծրագրներ և այլն. կային և մի քանի տետրակներ, որ երիտասարդ պրոպագանդիստը բաժանում էր գիւղացիներին,—մի խօսքով, բացի թղթերից ուրիշ ոչինչ չը կար։ Էֆէնդին խորին ուշադրութեամբ քննում էր բոլորը և խորհրդաւոր կերպով շարժում էր իր գլուխը։

—Եթէ իշխանութեան ձեռքը ընկնելու լինեն, ասաց նա,—այդ թղթերից մէկը բաւական է, որ քեզ, տանուտէր խաչօ, քո որդիների հետ կախաղան բարձրացնեն, իսկ քո բոլոր հարստութիւնը յարքունիս գրաւեն։

Ծերունին քարացած մնաց և ոչինչ պատասխանել չը կարողացաւ։ Վերջին խօսքերը ձգեցին նրան մի տեսակ մտաւոր անզգայութեան մէջ։

—Այդ բոլորը պէտք է այրել, ասաց էֆէնդին և կրկին թղթերը լցրեց խուրջինի մէջ։

—Ես ոչինչ չեմ հասկանում, իմ գլխումը խելք չէ մնացել, պատասխանեց ծերունին դողդողուն ձայնով, և նրա չիլված աչքերը լցվեցան արտասուքով։

Ցանկարծ միտքը փոխեց էֆէնդին. մինչու այրել, մտածում էր նա. պէտք է լաւ քննել այդ թղթերը. դրանք ինձ պէտք կը գան...մինչու ոչնչացնել։

Նա հարցրեց ծերունուց.

—Այս տան մէջ կայ մի այնպիսի գաղտնի տեղ, ուր կարելի լինէր առ ժամանակ թաղցնել այդ խուրջինը։

—Կայ, պատասխանեց ծերունին։

Նրա տան մէջ կային մի քանի գաղտնի պահարաններ, որոնց մէջ վտանգի ժամանակ թաղցնում էին տան թանգագին իրեղէնները։ Որովհետև վտանգը այս երկրում միշտ անպակաս էր, այս պատճառով պահարաններից մի քանիսը լիքն էին, և մէկը միայն մնացել էր դատարկ, որ կարելի էր ցոյց տալ էֆէնդուն։

Նրանք վեր առեցին չարագուշակ խուրջինը և դիմեցին մի ներքնատուն, որ ծառայում էր ձկթ,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Մ. ՄԻԱՆՍԱՐԵԱՆՑ

—

Մի տխրալի լուր է հասել մեզ Ս. Պետերբուրգից։

Ապրիլի 5-ին վախճանվեցաւ մայոր Մ. Միանսարեանց։ Հանգուցեալը շատ ծեր մարդ չէր։ Նա ծնվեցաւ 1830 թուին, ուրեմն այժմ յիսուն տարեկան էր։ Գուցէ նա դարձեալ երկար ապրէր, եթէ Ս. Պետերբուրգի կլիման պատճառ չը լինէր նրա յանկարծակի մահվան։ Մ. Միանսարեանց յայտնի էր որպէս եռանդուն, տոկուն աշխատող։ Նրա աշխատութիւնները հայոց գրականութեան համար մի յարգելի անուն կը թողնեն հանգուցեալին մայրենի նոր գրականութեան զարգացման պատմութեան մէջ։ Ո՞ւմ յայտնի չեն Միանսարեանցի այլ և այլ հրատարակութիւնները, Վայելչագրութեան տետրակները, նրա «Հայկական Քնար» երգարանը, նրա «Ցուցակը» Արևելքին վերաբերեալ գրքերի։ Մենք անձամբ էլ ծանօթ էինք Միանսարեանցի հետ և կարող ենք վկայել որ հանգուցեալի ջերմ ազգասիրութիւնը, նրա սիրող սիրտը և վառվռուն բնաւորութիւնը, նրա ատելութիւնը դէպի ամեն բան ինչ որ անարդար, սուտ, ստոր, կեղծ և վնասակար էր,—սիրելի էին անում նրան իր բոլոր բարեկամներին։ Միանսարեանը իր չորս կողմ անարդարութիւն, կեղտ և չարակամութիւն տեսնելով, բոլորովին առանձնացած կեանք էր վարում։ Կուռել ամբողջ հասարակութեան դէմ, անխնայ մտրակել կեղտը և կեղծաւորութիւնը, ատել ժամանակակիցներին և գործել ապագայի համար,—դա շատ ծանր կոչում է.... Այդ տեսակ մարդիկ երկար ապրել չեն կարող։

Ամբողջ կեանքը բացարձակ և անխնայ կռուել հասարակութեան կեղտի դէմ՝ էժան չէ նստում։

Հանգիստ քեզ հին բարեկամ, հանգիստ քեզ մոքի աղնիւ, թէև համեստ գինուոր։

Գրիգոր Արծրունի

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

1881 թուի օգոստոսին Թիֆլիսի մէջ լինելու հնագիտական ժողովի համար պատրաստական աշխատանքները՝ կոմս Ա. Ս. Ուվարովի եռանդուն գործունէութեան շնորհիւ շարունակվում են։ Ինչպէս յայտնի է, Նորին Բարձրութիւն կովկասեան Փոխարքան պատրաստական աշխատանքների համար բարի հաձեց տալ 15,000 ր.։ Մենք լսել ենք, դրում է «Русскій Курьеръ» լրագիրը, որի մէջ տպված է այս յօդուածը, թէ ի նկատի ունենալով հնագիտական ժողովածուների մեծ քանակութիւնը, որը մասամբ հաւաքված է արդէն և մասամբ պէտք է հաւաքվի և որը պէտք է դնվի Թիֆլիսի թանգարանի մէջ, հարկաւոր եղաւ թանգարանի տունը մեծացնել և այդ նպատակի համար Նորին Բարձրութիւնը տուել է 40,000 ռուբլի։ Անցեալ տարի հնագիտական հետախուզութիւնները Կովկասի մէջ կատարում էին Անտոնովիչ, Բերենշտամ և Պոլեակով պրոֆէսսորները։ Պրոֆէսսոր Անտոնովիչ հետախուզութիւններ էր անում հիւսիսային Կովկասում, Վլադիկավկասի և Մոզդոկի մէջ եղած տարածութեան վրա։ Նրան աջողվեցաւ շատ հետաքրքիր տեղեկութիւններ և ապացոյցներ հաւաքել այդ երկրի հին ազգաբնակութեան կուլտուրայի մասին։ Պ. Բերենշտամ հետախուզեց Կովկասի հիւսիսա-արևմտեան մասը (Կուբանսկայա Օբլաստ) և այնպիսի առարկաներ գտաւ, որոնք Սկիւթացոց ժամանակներին են վերաբերվում։ Պ. Պոլեակով հետախուզեց Անդրկովկասի բազմաթիւ այրերը, դլխաւորապէս Արարատի ստորոտները, որոնց մէջ շատ քիչ հետաքր գտնվեցան հին քարէ դարի։ Ինքը կոմս Ուվարով մի քանի տեղեր փորել տուեց ի միջի այլոց Սամթավրէ գերեզմանատունը Մցխեթի մօտ և Կապբեկի շրջականերում։ (Օսեթում)։ Այդ հետախուզութիւնների հաշիւները արդէն կազմված են, իսկ Պոլեակովի հաշիւը տպվում է։ Եկող ամառ Կովկասի մէջ հետախուզութիւններ կանեն մի քանի անձինք։ Ի միջի այլոց պ. Բերենշտամ կը շարունակէ իր հետախուզութիւնները Կուբանի նահանգում, պ. Սիմօնովիչ նոյն նպատակով կերթայ հայոց հին մայրաքաղաք Արմաւիր, որ Քրիստոսի ծնունդից 2,000 տարի առաջ է հիմնված, իսկ պ. Վ. Կովալեվսկի մտադիր է պալէօնտոլոգիական քննութիւններ անել։ Բացի այդ դիտաւորութիւն կայ հետախուզել Դերբենտի շրջականները և Հայաստանի մի քանի տեղերը։

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

27 մարտի

Այստեղ թանգութիւնը սաստկացաւ, հացը հասաւ 5 ռուբլու և դրանից էլ բարձր։ Երէկ ալիւրի պուդը ծախվեցաւ 5 ր., 40 կ.։

Հին Նախիջևանի գաւառապետի օգնականը գիւղերում շրջագայելով յորդորում է ժողովրդին նուիրատուութիւններ անել, դումար կազմել և օգնել, պահպանել չքաւորներին։

Թող թոյլ տրուի մեզ յայտնել, որ այս մասնաւորների աշխատութիւնը անզօր է, առանց կառավարութեան ձեռնհասութեան։ Պարսկաստանից ցորեն ստանալու ամենայն յոյս ի զուր անցաւ, գաւառումն էլ եթէ ցորեն կամ ալիւր կայ, անյայտ անձանց մօտ պէտք է լինի, որոնք երկիւղից դուրս չեն բերում վաճառելու։ Միակ յոյսը Թիֆլիսն է, բայց այդտեղից էլ հասցնելն այժմ համարեա անկարելի է դարձած, թանգութեան և անասունների ճարակի պակասութեան երկիւղից ոչ սայլորդներ և ոչ ուղտապաններ չեն յանձն առնում տանել պուդը 2 ր. 50 կոպէկ վարձով էլ, այլ և պէտք է ասած որ յանձն առնողներին էլ դժուար է հաւատալ թէ նրանք խկութեամբ տեղ կը հասցնեն ընդունած ցորեն կամ ալիւրը, ինչպէս որ արդէն քանիցս տեսնվեցաւ մօտ ժամանակներումս։

Ահա այժմ, այս կրիտիկական միջոցում մեր բոլոր յոյսը կենտրոնացած է միմիայն բարեխնամ կառավարութեան վրա։ Լիայոյս ենք, որ ժողովրդեան այս անել վիճակի մասին տեղեկանալով՝ կառավարութիւնը անմիջապէս ձեռք կառնէ հարկաւոր միջոցները անօգնական ժողովրդին պաշար հասցնելու և թանգութեան հետզհետէ սաստկանալը խափանելու։ Այդ տեսակ միջոցներ կարող են լինել թէ Պարսկաստանից ցորեն անցկացնելու համար թոյլատրութիւն պահանջելը, թէ տէրութեան ամբարանոցներից ցորեն և ալիւր բաժանելը և թէ Թիֆլիսից հասցնելու համար ժողովրդեան նպաստելը։ Ցաւալի որ բարեխնամ կառավարութիւնը զանցաւորութեան չի տայ և այն տեսակ միջոցներ, որոնցով կարելի լիներ եկող տարի ևս այսպէսակ թանգութիւն պատահելու առաջն առնել։

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Մարտի 10-ին

Արդէն յայտնի է ձեզ և ամենին այժմեան սարսափելի թանգութիւնը։ Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեր կողմերը նոյն թանգութիւն կայ, սակայն աւելի քստմնելի, զարհուրելի է տեսնել Մասիսի ստորոտում բնակվող «Գեալթուրցի» քրդերի այժմեան անպատմելի նեղութիւնը ու տառապանքը սովի ձեռքից։ Ես ինքս աչքով տեսայ Նրանց խմբովին այլանդակված կերպարանքով մեր Սուրմալուի հայերի դռները պտտելիս և հաց մուրալիս...։ Քանի որ մարտ ամսի սկզբին ձիւնն ու բուքը չէր ծածկել երկրի երեսը, քանի որ եղանակը մի փոքր մեղմացած բացվել էր, յիշեալ քրդերի բազմութեան մեծագոյն մասը Մասիսի ստորոտի շամբի (սաղ) եղեգների արմատները հանելով, ուտում և ապրում էին, իսկ երբ նորից ձմեռը և ձիւնը սաստկացաւ, ողջ գետինը ծածկեց Նոքա (այսինքն քրդերը) ստիպվեցան իրանց յոյսը դնել հայերի վրա, հայերից յուսալով ապրել։ Ինչպէս Նրանց ծանօթ մարդիկը պատմում են, այդ քրդերն էին Հին-Բայազէտի հայերի տան կայքը։ Ապրանքը յափշտակում տանում, նոյն քրդերն էին Նրանց մարդիկը սպանում, կոտորում, և Նրանց անմեղ երեխանցը վեր առնում ձգում տների վառված կրակի մէջ...։ Տաշբուռունցի Մանուկեան Աւագ անձը պատմում էր նոյն սովատանջ քրդերի բերանացի հրապարակաւ խոստովանութիւնը, որոնք խղճահարվելով իրանց անգութ արարմանց վրա, ասում էին. «մենք որ մեր ձեռքով չատերին հայերից (Բայազէթում) սաղ սաղ քերթում, սպանում էինք, մենք որ Նրանց անմեղ երեխանցը բռնում գցում էինք կրակի մէջ... մենք որ չատ ծծմեր կնոջ ծիծը կտրելով, թողնում էինք ողորմելի երեխաներին քաղցած, Նրանց արդար Աստուածը մեզ այս օրին, այս սովին ռաստ բերեց... ի սէր Աստուծոյ մենք արինք, դուք մի արէք, մենք մեռնում ենք սովից, մեզ մի կտոր հաց տուէք, մեր կեանքը փրկեցէք...»։ Բայց էլի մի դթասիրտ հայերը խղճալով, մի կտոր հաց սիրով տալիս են իրանց մշանջենաւոր արիւնարբու թշնամի քրդերին, դարձեալ մեր հայերը պահում են Նրանց։ Ինչպէս առաջ ևս հաղորդել եմ ձեզ, ամեն օր, ամեն րօպէ քրդերի քաղցած կարաւանը պակաս չէ մեզանում։ Մի պապիրոս ծխելու միջոցում տասնից աւելի սոված քրդեր գալիս առաջիդ կանգնում, վիզը ծռում և մի կտոր հաց խնդրում։ Թէ որ ասեմ մարդ չատ անգամ դառնացած կերպարանք է ցոյց տալիս այդ խուռն սովալլուկ բազմութեան, մի մեղադրէք մեզ, բնականաբար ամեն բանի չափազանցութիւնը ձանձրութիւն, զզուանք է պատճառում մարդուս։ Այժմ այսպէս պատահել է մեզ, դեռ մէկին ճանապարհ չը ձգած, տեսնում ես միւսը, և անթիւ միւս եկաւորներ հարկադրում են մարդու չատ անգամ բացասել։ Մէկ օր նստած սենեակիս դրան առաջ, արևկողմն (Աստուած արևկող համարի) կարդում էի «Մշակ» լրագիրը, ինչպէս չատերը, տեսնեմ մի յաղթանդամ քուրդ մի մեծ կարպետ ուսին գցած, մօտեցաւ ինձ. «առ այս կարպետը և որքան կամքդ է ալիւր կամ կորեկ տուր սորա փոխարէն, երեխայքս սովից մեռնում են»։ Հարցրի նորա որտեղացի լինելը, նա ասաց որ ինքը այժմ բնակվում է Մասիսի թիկանց վրա «Ղօրդան» կոչված անտառակի մօտ։ Երբ ես մանրամասնաբար կամեցայ Նրանց այժմեան դրութիւնը հարցնել, այդ

որքան կարելի է, աներկիւղ, անվրդով և միամիտ ձևանալ։ Թող որտեղ որ ուզում են պտռեն, մանդան, վտանգաւոր բանը մենք արդէն թաղցրինք, ինքը սատանան էլ չի կարող գտնել։ Մի ուրացիր, թէ այն «զուրուկ փչողը» քո տանը եղել է, միայն ասա, որ դու Նրան չես ճանաչում, և Նրա ինչ նպատակով այս կողմերում թափառելը ոչ քեզ և ոչ քո որդիներին յայտնի չէ։

Վերջացնելով իր պատուէրները, էֆէնդին դուրս եկաւ ներքնատանից։

—Հիմայ ցոյց տուեցէք ինձ մի ուրիշ ճանապարհ, որ ես հեռանամ, ասաց նա իր չուրջը նայելով։—Ես պէտք է աշխատեմ, որ ինձ չը տեսնեն այստեղից դուրս գալու ժամանակ։

Ծերունին տարաւ Նրան դէպի տան հետևի դուռը, որ ծառայում էր անասունների երթևեկութեան համար։

—Այժմ մնացէք բարեաւ, ես կրկին կը վերադառնամ, երբ խուզարկուները եկած և իրանց գործողութիւնը վերջացրած կը լինեն։ Ես Նրանց մի կերպով կը հանդստացնեմ, միամիտ կաց։

Էֆէնդին հեռացաւ։ Ճանապարհին նա մի քանի անգամ կրկնեց իր մտքումը այդ խօսքերը. «հիմայ հոգիդ իմ ձեռքումս է, տանուտէր խաչո, ինչ որ ուզեմ, կանեմ»...

Կէսօրից մի ժամ անցել էր։ Վարդանը, Հայրապետը և Ապոն տակաւին չէին վերադարձել։ Ծերունու միւս որդիները դաշտումը գործում էին։ Կնիկները զբաղված էին իրանց անտեսութիւնով, որովհետև դաշտում աշխատողների համար պէտք էր ճաշ ուղարկել։ Գիւղացիները ըստ մեծի մասին ճաշը ուտում են դրսում, և գիշերը ընթրիքի ժամանակ միայն դալիս են տուն։ Դեռ ոչ ոք չը գիտեր, թէ ինչ էր պատահել։

Ծերունի խաչօն անհամբերութեամբ սպասում էր խուզարկուներին, որպէս մի դատապարտեալ սպասում է մահուան պատժին, որովհետև գիտէ, որ անփախչելի է, գիտէ, որ ազատվելու ոչ մի հնար չունի։ Նա տանեցիներին եղելութեան իսկութիւնը չը յայտնեց, չը կամենալով նախապէս վախեցնել Նրանց։

Վերջապէս յայտնվեցաւ մի յիսնապետ, մի խումբ զափթիաների, կաւաղների և զինուորների հետ։

Տանեցիները որովհետև տեղեկութիւն չունէին, թէ ինչ էր պատահել, այս պատճառով զինուորների գալուստը սկզբում Նրանց շատ չը վախեցրեց։ Նրանք սովորել էին շատ անգամ ընդունել այսպիսի հիւրեր, որ գալիս էին, օրերով մնում էին, ուտում էին, խմում էին և յետոյ գնում։ Թուրք զինուորների իջևանելը հայ գիւղացիների տներում, մանաւանդ տանուտէրի օդայի մէջ, մի սովորական բան էր։

—Ինձ հրամայած է այս տան մէջ խուզարկութիւններ անել, ասաց յիսնապետը դառնալով ծերունի խաչօին։

—Իմ տունը ձեր առջևն է, որտեղ կամենում էք, նայեցէք, պատասխանեց ծերունին, աշխատելով պահպանել իր սրտի խաղաղութիւնը։

Յիսնապետը տան դռները փակել տուեց, ամեն կողմ պահապաններ կանգնեցրուց և սկսեց խուզարկութիւնը։ Նախ մտաւ նա օդան, յետոյ միւս սենեակները, ամեն ծակուծուկ նայեց, ամեն իրեղէնները աչքից անցկացրեց և ոչ մի կասկածաւոր առարկայ չը գտաւ։ Կնիկները այս տեսնելով, հասկացան, որ մի անսովոր բան պատահած պէտք է լինի, սկսեցին լաց լինել, և աղաղակ բարձրացնել։ Ծերունին նրանց սատեց, որ լռեն, հանդստացնելով, որ վախենալու ոչինչ առիթ չունեն։

զութիւնը ու տառապանքը սովի ձեռքից։ Ես ինքս աչքով տեսայ Նրանց խմբովին այլանդակված կերպարանքով մեր Սուրմալուի հայերի դռները պտտելիս և հաց մուրալիս...։ Քանի որ մարտ ամսի սկզբին ձիւնն ու բուքը չէր ծածկել երկրի երեսը, քանի որ եղանակը մի փոքր մեղմացած բացվել էր, յիշեալ քրդերի բազմութեան մեծագոյն մասը Մասիսի ստորոտի շամբի (սաղ) եղեգների արմատները հանելով, ուտում և ապրում էին, իսկ երբ նորից ձմեռը և ձիւնը սաստկացաւ, ողջ գետինը ծածկեց Նոքա (այսինքն քրդերը) ստիպվեցան իրանց յոյսը դնել հայերի վրա, հայերից յուսալով ապրել։ Ինչպէս Նրանց ծանօթ մարդիկը պատմում են, այդ քրդերն էին Հին-Բայազէտի հայերի տան կայքը։ Ապրանքը յափշտակում տանում, նոյն քրդերն էին Նրանց մարդիկը սպանում, կոտորում, և Նրանց անմեղ երեխանցը վեր առնում ձգում տների վառված կրակի մէջ...։ Տաշբուռունցի Մանուկեան Աւագ անձը պատմում էր նոյն սովատանջ քրդերի բերանացի հրապարակաւ խոստովանութիւնը, որոնք խղճահարվելով իրանց անգութ արարմանց վրա, ասում էին. «մենք որ մեր ձեռքով չատերին հայերից (Բայազէթում) սաղ սաղ քերթում, սպանում էինք, մենք որ Նրանց անմեղ երեխանցը բռնում գցում էինք կրակի մէջ... մենք որ չատ ծծմեր կնոջ ծիծը կտրելով, թողնում էինք ողորմելի երեխաներին քաղցած, Նրանց արդար Աստուածը մեզ այս օրին, այս սովին ռաստ բերեց... ի սէր Աստուծոյ մենք արինք, դուք մի արէք, մենք մեռնում ենք սովից, մեզ մի կտոր հաց տուէք, մեր կեանքը փրկեցէք...»։ Բայց էլի մի դթասիրտ հայերը խղճալով, մի կտոր հաց սիրով տալիս են իրանց մշանջենաւոր արիւնարբու թշնամի քրդերին, դարձեալ մեր հայերը պահում են Նրանց։ Ինչպէս առաջ ևս հաղորդել եմ ձեզ, ամեն օր, ամեն րօպէ քրդերի քաղցած կարաւանը պակաս չէ մեզանում։ Մի պապիրոս ծխելու միջոցում տասնից աւելի սոված քրդեր գալիս առաջիդ կանգնում, վիզը ծռում և մի կտոր հաց խնդրում։ Թէ որ ասեմ մարդ չատ անգամ դառնացած կերպարանք է ցոյց տալիս այդ խուռն սովալլուկ բազմութեան, մի մեղադրէք մեզ, բնականաբար ամեն բանի չափազանցութիւնը ձանձրութիւն, զզուանք է պատճառում մարդուս։ Այժմ այսպէս պատահել է մեզ, դեռ մէկին ճանապարհ չը ձգած, տեսնում ես միւսը, և անթիւ միւս եկաւորներ հարկադրում են մարդու շատ անգամ բացասել։ Մէկ օր նստած սենեակիս դրան առաջ, արևկողմն (Աստուած արևկող համարի) կարդում էի «Մշակ» լրագիրը, ինչպէս շատերը, տեսնեմ մի յաղթանդամ քուրդ մի մեծ կարպետ ուսին գցած, մօտեցաւ ինձ. «առ այս կարպետը և որքան կամքդ է ալիւր կամ կորեկ տուր սորա փոխարէն, երեխայքս սովից մեռնում են»։ Հարցրի նորա որտեղացի լինելը, նա ասաց որ ինքը այժմ բնակվում է Մասիսի թիկանց վրա «Ղօրդան» կոչված անտառակի մօտ։ Երբ ես մանրամասնաբար կամեցայ Նրանց այժմեան դրութիւնը հարցնել, այդ

խուզարկութիւնը վերջացնելուց յետոյ յիսնապետը սկսեց իր հարցու փորձը.

—Այս տանը բնակվում էր մի երիտասարդ Միքայէլ Դուզուկջեան անունով։

—Նա մի քանի գիշեր միայն մնաց այստեղ, պատասխանեց ծերունին։

—Դուք առաջուց ճանաչում էիք Նրան։

—Առաջին անգամն էր, որ տեսայ Նրան։

—Ուրեմն ինչու ընդունեցիք ձեր անուն։

—Ես այս գիւղի տանուտէրն եմ։ Ձեզ յայտնի է մեր երկրի սովորութիւնը. տանուտէրի տունը մի տեսակ քարվանսարայ է, մի տեսակ հիւրանոց է, ուր ամեն մի օտարական, ամեն մի անծանօթ մարդ օթևան է գտնում։ Ի՞նչ կարող եմ գիտենալ, թէ ո՞վ է գալիս, կամ ո՞վ է գնում։

—Նա չը թողեց այստեղ մի բան։

—Ոչինչ չը թողեց։

—Դուք չը հասկացաք, թէ ինչ դիտաւորութեամբ էր շրջում նա այս կողմերում։

—Նա մեզ ոչինչ չը յայտնեց։ Այրքանը գիտեմ, որ նա վարժապետ էր։

—Դուք չը գիտէք, թէ նա ում հետ էր տեսնվում, կամ ում հետ էր խորհրդակցում։

—Վարժապետը ամեն մարդու հետ տեսնվում է աշակերտներ գտնելու համար։

—Այժմ գիտէք, նա որտեղ է։

—Չը գիտեմ։

—Կալանաւորված է։

—Աւելի լաւ, եթէ վատ մարդ էր։

Այդ միջոցին զարկեցին տան դռան մուրճը։

—Ոչ ոքի ներս չը թողնել, հրամայեց յիսնապետը։

Ծառան յայտնեց, թէ Թոմաս էֆէնդին է։

—Նա կարող է գալ։

տարսամ չ։

Ազգովին ողբալ ենք մեր Տեառնեղբարի հանգուցեալ Գրիգոր Ալեքսանդրեանցի մահուան համար։ Ամենայն ազգասէր անձ, որ նրան ճանաչում էր, ինչպէս մեր ազգի մի ազնիւ զաւակ, ինչպէս մեր ազգի մի ազնիւ զաւակ, ինչպէս մեր ազգի մի ազնիւ զաւակ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թէ կենտրոնական և թէ Զ. Գրիգորեանի գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «Քերթուածք և թարգմանութիւն», պ. Ն. Ադամեանի, հրատարակութիւն Ս. Արծրունւոյ: Գիրքը բաղկացած է 243 երեսներից: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particuliers sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

3—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԲԱՖՖԻ

ԳԺՄԳԺՔԱՌԺ «ՎԱՅՏՆ»

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՔԼԻՈՒ-ՅԱԿՈՐԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԴՆԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրօսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

10—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դօկտօր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյգուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Դամառ-Բաթպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փէլլիքօի Ֆոսիմինիացին Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Խտալիան. Տարբոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վ. զօրօվ վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտեյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Աստանաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Ալոյ Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Բնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու: . . . . . 10 կ.

4. Գուանատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստօպ, մօտ 1360 բուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տողաշարներև տողացանցեր մեծ թարաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կոմբ ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու:

Տպագրողը ինքը բնակվում է Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյգունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Գուրս եկաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՀՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ բուբլի: Վաճառվում է յօգուտ Վանայ սովատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում: Գումարող առնողներին զիջումն կը լինի: Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Ցանկացողները ստանալ միասին և «Յիսնաղի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկեն մէկ բուբլ երեսուն կոպ.:

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄՐԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԵՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փօստի ծախսը մեզ վրա առնելով. Կոնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ՎԿԱՅԱԿԱՆ ունի և իմանում է ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները ԴԱՍԵՐ Է փնտռում: Հասցէն ԿԱՄԵՆԴԱՆՑԿԱՑԱ փողոց, տուն ՇԱԽՄԱՒՐԱԴՕՎԻ, № 23:

2—4 (2)

Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյ «Թանդոյեանց» օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը, տալիս է կատարեալ նոյն ուսումնարանապատկան կրպակները և սենեակները: Պայմանաթուղթը կարելի է կարդալ նոյն ուսումնարանում ամենայն օր, իսկ աճուրդասութիւնը կը լինի ամսոյս 24-ին առաւօտեան 10 ժամին:

2—2

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, ուր ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

8—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկօտի, «Աբրահամ Լինկօլն» սարուկներին ազատող Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մօլիէրի հետ «Ցարտիւֆ կամ Կեղծաւորը» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նոտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՑԹԻԻԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, նա անուավոր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 9 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона